ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-965[1]-17.03.2016-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 171.1 հոդվածով

«Հոդված 171.1. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու կանոնները խախտելը

Բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձի կողմից դիտավորությամբ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու օրենքով սահմանված կանոնների խախտմամբ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառումն ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող անձի նկատմամբ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը).	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Արա Բաբլոյան	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «4. Կինը չի կարող հանդես գալ որպես փոխնակ մայր, եթե՝ 1) առկա է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված բժշկական հակացուցումներից որևիցե մեկը,	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	2) նախկինում առնվազն երկու անգամ հանդես է եկել որպես փոխնակ մայր:»: Նման շարադրանքից բխում է, որ թվարկված երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է միայն, որ կինը չի կարող հանդես գալ որպես փոխնակ մայր, մինչդեռ իրականում այս պայմաններից գեթ մեկի առկայությունն էլ բավական է, որպեսզի նրան արգելվի հանդես գալ որպես այդպիսին: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասը, առաջարկում եմ 15-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «որևիցե մեկը,» բառերը փոխարինել «որևիցե մեկը, կամ» բառերով:	